



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

16 մարտի 2022 թվականի թիվ 37-Ա

ք. Երևան

«ՀԻԲԲԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը, նույն հոդվածի 4-րդ մասը և Երևան քաղաքի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի 2022 թվականի մարտի 04-ի հայցի ապահովման միջոցներ ձեռնարկելու մասին որոշումը (քաղաքացիական գործ թիվ ԵԴ/9430/02/22)՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը *որոշում է*.

1. Կասեցնել «ՎԻ ԷՍ ՏԵԼԵՊՐՈՋԵԲԹ» ՍՊ ընկերության դիմումի հիման վրա 2022 թվականի փետրվարի 11-ին ցանցային օպերատորի գործունեություն իրականացնող «ՀԻԲԲԻԴ ՍՈԼՅՈՒՇՆՍ» ՍՊ ընկերության հանդեպ հարուցված թիվ 3 վարչական վարույթը՝ մինչև քաղաքացիական դատավարության կարգով քննվող գործով որոշում (դատական ակտ) կայացնելը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ և ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

16 մարտի 2022թ.
ք. Երևան